287 Մնայուն բան չունեմ երկրում,

1. Մնայուն բան չունեմ երկրում,
Իմ մարմինը իմը չէ,
Հոգիս Տիրոջ տունն է գնում,
Հիսուս Տերը կկանչե:

Հիսուս շինեց տուն երկնային,
Ցանեց ճերմակ ծաղիկներ,
Գործ ու գանձերս ճամփեմ երկինք
Ու հետևից ես գնամ:

2. Ինձ չտվեց այս աշխարհը
Ոչ փրկություն, ո՛չ գանձեր,
Ինձ էլ պիտի տիրեր մահը,
Թե Հիսուսը չգներ:

3. Հողեղեն էի, բայց շնորհքով
Դարձա հոգի երկնային,
Տեր կանչելով ու «Հայր մերով»
Գնամ իմ Տեր Հիսուսին:

4. Թեև ճամփաս փուշ է, քարոտ,
Ու մեծ խաչ կա իմ ուսին,
Բայց տուն ունեմ շողոտ-շաղոտ,
Սրտումս ունեմ Հիսուսին: